**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**/2-րդ հանրային լսման/**

**«ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Նոգառա» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

Արամուս բնակավայր «24» նոյեմբերի 2025թ.

Կազմակերպված երկրորդ հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը:
- Կոտայքի մարզի Արամուս բնակավայրի ղեկավար Ս. Հակոբյանը:
- «ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Պողոսյանը, ներկայացուցիչներ Ա.Ավագյանը, Գ. Հակոբյանը և համայնքի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2024թ., այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2025թ. նոյեմբերի 24-ին ժամը 12:00-ին Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Նոգառա» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվում է իրականացնել Արամուսի բազալտի հանքավայրի «Նոգառա» տեղամասի արդյունահանման աշխատանքներ: Նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Վերոգրյալի հիման վրա՝ Օրենքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ 2024 թվականի փետրվարի 21-ին, ժամը 12:00-ին Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացել է նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Այդ լսման արդյունքում 2024 թվականի մայիսի 16-ի N 62-Ա որոշմամբ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանին «ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Նոգառա» տեղամասի արդյունահանման աշխատանքներ իրականացմանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային երկրորդ լսումներ:

Հ. Մեսրոպյանը նշեց, որ երկրորդ հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և Որոշման պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2025 թվականի նոյեմբերի 6-ի համարում, հայտարարությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

Հաջորդիվ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կապված հայցվող տարածքով անցնող ըստ ներկայացված հաշվետվության չգործող ոռոգման ջրագծի վերաբերյալ:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցան Արամուս բնակավայրի ղեկավար Ս. Հակոբյանը՝ նշելով որ հայցվող տարածքով ոռոգման ջրագիծ չի անցնում:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցավ նաև «ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Հակոբյանը, մանրամասն ներկայացնելով նախագիծը:

«ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ մասնակիցների կողմից եղան հարցադրումներ: Հարցադրմանը տրվեց սպառիչ պատասխաններ:

Հարցուպատասխանին հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային լսման մասնակիցները տվեցին իրենց համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրային լսման պատասխանատուն ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

«ՆՈԳԱՌԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Գուրգեն Հակոբյան: